



ԱՐԾՈՒՒ  
ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՌՅԱՆ, ՀԱՅԵՆԵԱՆԻ ԹԻՒՐ  
ՇՐՈՒՄԻՆԻ ՄԵՆԵԱՍԿԱՆԵ և ԴՐՈՒՄՆ


ԽՐԱԶԳԻՆ ՀԱՅՐԵՆԱԿՈՍ  
ՄԱՐՏԻՉ ԿԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

1864

ՇՐՈՒՄ և ԴՐՈՒՄ

ԹԻՒ 4

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՄԻ  
Ի ԿԱՐԴԱՊԵՏ



# THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS

1881

THE UNIVERSITY OF CHICAGO

CHICAGO, ILLINOIS

THE UNIVERSITY OF CHICAGO  
CHICAGO, ILLINOIS



Բայց քաջասիրտ ճշմարիտ առաքինի մարդը, յուսահատիլ երբէք չգիտեր. ամէն արկածք եւ փորձանք իւր քաջութիւնն ի գործ դնելու առարկաներ լինելուն համար, իւրեան ուրախութիւն կպատճառեն: Քաջասիրտ կամաւոր զինւոր մըն է. այս կամաւորութեան սկզբունքն երբէք իւր մտքէն չհաներ. ամէն մէկ պատերազմական փորձութեանց ամենայն համբերութեամբ դէմ դնելու համար, ի վաղուց պատրաստուած եւ յանձնառու եղած է. հանգստութեան եւ ծուլութեան անհաշտ թշնամի է. ուրախութիւնն եւ սէրն իւր երկաթի գրահն է. տրտմութեան նետը զանի չկրնար գծել. միշտ արթուն եւ ըզգաստ լինելուն պատճառաւ ալ, իրեն համար երբէք վշտանգ չկայ. եւ հետեւաբար աներկեւան կեանք մը կվարէ. ամէն ուր եւ իցէ թշնամի նորա դէմ դնելու կվախնայ. վատն զի նա իւր խաղաղութիւնը փորձութեան մէջ հաստատած է. սա ալեկոծեալ աշխարհիս մէջ անկեց դուրս խաղաղութիւն փնտռել գտնալն մեծ անմտութիւն մը լինելն իւր սրտին խորերն գրոշմուած է:

Թէ ինքզինքը եւ թէ ուրիշներն կառավարելու կարող քաջասիրտ նաւապետ մըն է, իմաստութեան եւ արթնութեան զեկը երբէք ձեռքէն չթողուր. սոսկալի փութորիկներէն եւ ալեկոծութիւններէն երբէք վախնալ չգիտիր, վասնզի նա ածային սիրոյ գինւովն արբեալ է. որն ուր միշտ իրեն թիկունք եւ օգնական է. նոյն փորձանաւոր ամեհի ալեաց չվարժուող վատասիրտքն, նորա անխռով հանդարտութեան վերայ կնային ու կզարմանան. նոյն միջոցին կտեսնան որ նա միշտ երջանկութիւն զգալով, նոյն ճամբորդութենէն անանալիք հոգեւոր շահերուն վերայ ուրախութեամբ սիրտը միտքը զբաղեցնե:





ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆ ԳԵՐԱՊԱՏԻ ԹՕՓՈՒՉԵՆՆ ՅԱ-  
ԿՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՒ ՎԱՆԱՅՕՐ ԼԻՄ ԱՆԱՊԱՏԱՅ

ՅԱՂԱԳՍ ԱՂՔԱՏԱՅ ԹՇՈՒԱՌ ՎԻՃԱԿԻ

Աղքատ անքատ յաղեացն հատեալ,  
Երեսն ի վայր ողնակորեալ,  
Երեւեալ տեսքն թարշամեալ,  
Փըշուր հացի նա կարօտեալ,  
Հաց հայցէ յայց՝ առ դրուհս լիոց,  
Արեւակէզ տապի ի բոց,  
Եւ ի ձըմեռն ցրտասառոյց,  
Բաբախ ի ծուռնկս եւ ձեռն ի ծոց,  
Գողցէ եւ վերս ունիլ յանձին,  
Ըստ Ղազարու այն առակին,  
Յոր մերձ եկեալ շունք լեզուին,  
Անկեալ առ դուրս ողորմագին:

ՅՈՒՍԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԱՂՔԱՏԱՅ

Մի վհատիր ի տանջդ մարմնոյ,  
Ձի երանի եքո հոգւոյ,  
Բառնիլ ունիս ի հրեշտակաց,  
Տանիլ ի գոգն Աբրահամու:  
Որպէս եւ իսկ տայ երանի,  
Սուրբ եւ անսուտ բանն Քնի:  
Հոգւով կամաւ այն աղքատի,  
Զարբայու թիւնն ունիլ երկնի:  
Բազմիլ ի սուրբ սեղանն օրհնեալ,  
Ի Քնէ քեզ պատրաստեալ,  
Զանմահական հացն վայելեալ,  
Յոր ոչ երբէք լինիս քաղցեալ:

## ԱՌ ՈՂՈՐՄԱԾ ԱՆՁՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՎԵՐՆՈՑՆ .

Այլ ողորմածն գեր ի վերոյ ,  
 Բարձր ի գլուխ՝ պարծի ըստ հոգւոյ .  
 Ընդառնաւ յանձին յուսոյ ,  
 Աճացեալ ըստ գթոյն սիրոյ :  
 Որ ողորմի խեղճ աղքատին ,  
 Փոխ Աստուծոյ տայ ըստ բանին .  
 Նա է Աճ ըստ վրձրութեան ,  
 Ոսկե բերան հայրապետին :  
 Ուստի , այր , դու փութա՛ս ունիլ ,  
 Անցաւորօքս զանանցս գրնել .  
 Զի յահելին ի գլուխ պարծիլ ,  
 Ի փառս անձառս վերաբաղմիլ :

## ԱՌ ԺԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱԿՆ .

Ժեր ալեւոր , ձեմեալ յընթացդ , Ժեր . Ժայր ե-  
 Հասեր ի ծայր եւ յեզր կենացդ . Եւր ինչոյ :  
 Զալիս ծփմանց ծովու աստեաց ,  
 Կոխան արկեալ գերծցիս ընդ անցդ :  
 Արդ ժամ քեզ մերձ ձեպ ծրրարել ,  
 Ի ծոց քոց հարց՝ ի հող հանգչիլ .  
 Մընալ փողոյն առ քեզ հնչիլ ,  
 Յառնել ի կեանս նոր նորոգիլ ,  
 Մահն ահա քեզ՝ մի ահ սարսուռ , Մահ . Պի ահ :  
 Եթէ գործովքդ ես անպրտուղ . Իմ յայր անձահո-  
 Աւուրց կենացդ անցեալ ի գործ , Եւր . այսինքն :  
 Վայ գիմու թեանդ յահ եւ երկիւղ : Ժանել ի կեանս ուն-  
 Այլ թէ վարուքդ արդիւնաւոր , Ժահն :

Իւ ծառ բարի լի պտղաւոր .  
 Պէս պէս տըրօք առ չքաւոր ,  
 Եւ յոր յարտօսր աղօթաւոր ,  
 Բ. Գ յիշատակս Թողեր յերկրիս ,  
 Զորդիս Թողունս բարեոգիս .  
 Զորս հրահանգել պարտ ի բարիս ,  
 Զորոց համարս տալ պարզ փողիս ,  
 Ահա քեզ մահն մայր նորոգման ,  
 Ճնանիլ յաներկս յանմահութեան .  
 Պարիլ ընդ սուրբս յարքայութեան ,  
 Կալ յանդիման Աճութեան :  
 Պըսակ փառաց ի գլուխդ եղեալ ,  
 Ընդ սուրբ ծերոցն վերադասեալ .  
 Սիմէօնի եւ Զովսեփայ ,  
 Խնդալ բերկրիլ է՛ի լոյս ցնծալ :

ՅԱՆԶՆ ՅՕՐԻՆՈՂԷՍ . ԴԻՄԱՌՆՈՒԹԻԻՆ

ԸՆԴ ԾԵՐՈՒՆԻՈՅՆ .

Վ. Կ. եւ եղբւր իմ վիճակի ,  
 Որ եմ ըստ քեզ ի ծայր կենի .  
 Չեղէ վաստակ ի գործս բարի ,  
 Հիշտիւ մարմնոյս զկեանս անցուցի ,  
 Ըստ երեւոյթս աշխարհաւորաց ,  
 Ի՛ն ըսեալ ի դասս կրօնաւորաց .  
 Բայց ի մեղաց գըտայ անդարձ ,  
 Հեռամբառեալ իմ չար կամաց :  
 Հեղգ յաղօթից զհօրկ յարոտասուաց ,  
 Եւ ոչ երկիւղ առ իմ Աճ .  
 Չար օրինակ զիս տեսողաց ,



Եւ գայթակղիչ սուրբ միանձանց :

Արդ եւ գերիւս զինչ արարից ,

Ահա առ դուրս եւ իմ մտից :

Գայ մերձ մահու կոխան ոտից ,

Տանիլ ի դասս չարաց խմբից :

Զի հաստատուն լինին տանջանք ,

Որպէս վճռեն քնարերոյ բանք :

Մերոց դասուց որք մենացեալք ,

Իբր ի կըրօնս հրեշտակացեալք :

Աւաղ :

Եթէ իբրեւ զմարդ մեղիցեմք ,

Ի լստ աշխարհի ախտակրիցեմք :

Ի պէս պէս մեղս շաղախիցեմք ,

Ի վեր քան զբնաւ տանջելոց եմք :

Զի որում շատ՝ շատ խնդրեսցի ,

Ըստ քանքարացն պահանջեսցի :

Այլ ինձ տուեալ ի ծրարս եղի ,

Ո՛չ բընաւին շահ ինչ ցուցի :

Ո՛հ Տէր Յիսուս՝ քաղցր ողորմած ,

Եւ ի խնդիր գերեոյս անկած :

Գնեալս արեամբդ ի գութս յանկ ած ,

Զի սուրբ ձեռինդ եմ արարած :

Ներել մաղթեմ անթիւ մեղաց ,

Փրկել ի չար խիստ տանջանաց :

Արժան առնել յետին տեղեաց ,

Յագիլ շնորհօքդ քո վշրանաց :

Միջնորդ կալեալ զսուրբ քառամբուն ,

Եւ ըզ ի ձեռսդ մըխեալ բեւեռն :

Զանգին արեանդ հոսեալ հեղեղն ,

Եւ ըզմայրդ կոյս արտասուահղն ,  
 Հայցմամբ վերին քո սուրբ զօրացն ,  
 Ի ընտրեալ զասուցդ աշակերտացն :  
 Ի արեամբ ներկեալ մարտիրոսացն ,  
 Ի անձնաչարչար ճգնաւորացն ,  
 Ողորմեա՛ Տէր՝ ինձ եղկելոյս ,  
 Եւ ամենայն արարածոց :  
 Յուսով ի քեզ ննջեցելոց ,  
 Վ երազասել պարուց սրբոց :  
 Ամէն :

ԱՌ ԶԱՌԱՄԵԱԼ ՂԵՐԶԻՆ ՎԻՃԱԿՆ :

Բանք իմ առ քեզ գտցեն զըրաւ ,  
 Զգուր կենցաղոյս բերեալ ի ճառ :  
 Ո՞ր զառամեալ զամսըդ առեալ ,  
 Զինչ շահեցար անտի ցայս վայր :  
 Որ իբր ըզծառ՝ արմատ արկեալ ,  
 Պէս պէս ոստովք վերընծիւղեալ :  
 Թէ զինչ բերիւք պողաւորեալ ,  
 Զքեզ տնկողին Տեառն մատուցեալ :  
 Ահա՛ ձրմեռն վերահասեալ ,  
 Տերեւք ծառոյդ իսկ թօթափեալ :  
 Տապար մերձ առ արմինդ եղեալ ,  
 Ըզ մահն ասեմ մօտեւորեալ :  
 Ո՞չ ծերունի ի գնոյդ անկեալ ,  
 Անբան ցընոր արդ անուանեալ :  
 Բնութիւն բընաւ տըղայացեալ ,  
 Շահիլ երբէք անկարացեալ :  
 Ուստի ահա՛ զ'իքէն ծընեալս ,

Իսկ տեսանեմ զդէմս դարձուցեալս .  
 Զորս սիրէիր ի քաղցր գգուանս ,  
 Փայփայէիր ի փափկականս :  
 Այժմ որ դնիս ի մուծ անկեան ,  
 Անխնամ թողեալ իբր անպիտան .  
 Ընդ անցս է՝ ընդ դարձս միշտ մոմուան ,  
 Եւ ոչ ձայնիդ տան պատասխան :  
 Ա՛խ՝ երբ իցէ զի մեռցի դա ,  
 Եւ կորիցէ անուն դորա .  
 Նախատ տրտունջ միշտ յարակայ ,  
 Վասն անկելոյդ խիստ անխընայ :  
 Բայց չէ՛ քեզ պարտ յուսահատիլ ,  
 Եւ ոչ բընաւ սրտաբեկիլ .  
 Այլ բարեբան եւ գոհ լինիլ ,  
 Օրհնել զնոսա զի քո են ծիլ :  
 Զի զոր կըրես այժմ յայս կենի ,  
 Ըզ տառապանս կսկըծալի .  
 Վախճան ունի յամենայնի ,  
 Ապաշխարանս իսկ համարի :  
 Ռստի համբեր համայն բերմանց ,  
 Ա՛ստ ի մարմնի ձախորդութեց .  
 Յուսով վերնոյն անգրաւ կենաց ,  
 Պըսակս հիւսել անձառ փառաց :  
 Ռւր քեզ հրաւեր ձայն Յիսուսի ,  
 Ե՛կ դու օրհնեալ Հօրն անեղի .  
 Ժառանգել արդ որ պատրաստի ,  
 Զարքայութիւն յաւիտենի :  
 Ի ԅաւիտեանս . Ամէն :



ԻՐԱՆԻ ՎԵՐՋԱԲԱՆ ՌԻԹԻՒՆ ԴԱՐՁԵԱԼ  
ՅԱՆՁՆ ՅՕՐԻՆՈՂԻՍ

Ո՛րչափ ցայս վայր բերան ի բանս ,  
Գլընել փոքր ինչ զմարդկան վիճակս .  
Ի բարութեանց եմ գուրկ համակս ,  
Միշտ ի չարեացն անկեալ պատրանս .  
Անփոյթ գոլ իմ զայլս խըրատեմ ,  
Ի վատ է՝ ի թիւրս հակամխեմ .  
Զքերանակիր թողեալ զաչս իմ ,  
Ի շիւղս այլոց յա՛ր նկատեմ ,  
Գիտեմ զկամս Տեառն արարչին ,  
Սամաւ գիտեմ ի գարշս աղտին .  
Իբրեւ ըզխոզս ի մէջ տղմին ,  
Հաղախիմ յախտս միշտ զազրագին ,  
Յակոր ումպետս Եպիսկոպոսս ,  
Մեղոք լըցեալ հազարս եւ բիւրս .  
Վայ յահեղին թշուառ հոգւոյս ,  
Զինչ պատասխան տայ քեզ Յիսուս .  
Զի թէ քննես Տէր իմ Տէր իմ ,  
Ըզբազմաթիւ զեղեռն գործս իմ .  
Ո՛ կարե կալ առաջի քո ,  
Զի ի քէն է քաւութիւն իմ ,  
Ա՛ճ քաւեա՛ զիս մեղաւորս ,  
Արդ արձակեա՛ ըզպարտաւորս .  
Հան՝ ի բանտէս ի տես ըզլոյս ,  
Վասն անուան քո Փրկիչ իմ յոյս .  
Որում փառք եւ գոհութիւն յաւիտեանս , Ամէն .



## ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

Բ Ա Ղ Է Շ (1)

## ԱՄՐՏՕԼՈՒ ՎԱՆՔ

Վանքը քաղաքին արեւմտեան կողմի ձորին մէջ հիւսիսային կողմի լեռան զառ ի վայրին վերայ շինուած է. տեղւոյն բնական բարձրութենէն զատ, բոլոր շէնքը քառայարկ, եւ աշտարակի մը պէս աւելի բարձրացած լինելով, հետեւաբար ամէնէն վերի դստիկոնէն եւ բոլոր տանիքին վերայէն, քաղաքին շինուածոց գրեթէ կէսէն աւելին, նոցա գեղեցիկ պարտիզաց, բարձրահասակ ծառոց, բերդին եւ իւր առջեւէն անցած յորդահոս վտակին եւ նորա վերայի կամուրջներուն ներկայացուցած դուրձալի եւ վայելուչ տեսարանաց բոլորն ալ կերեւան. Շէնքերուն մեծ մասն իւր եկեղեցւոյն կից հարաւային կողմն է. որոց ամէնքն ալ փոքրիկ քառակուսի, կապուղ, կարմիր եւ մոխրագոյն սրբատաշ քարերէ շինուած են. Դէմ առ դէմ երկու դուռ ունի. մեծ դուռն արեւմտեան եւ փոքրիկն ալ արեւելեան կողմն է. այս ետքինը փողոցէն ըստ բաւականին բարձր լինելով, քարէ ընդարձակ սանդուխ մը ունի իւր առջեւն. այս երկու դուռն մէջ տեղն է վանքին բակն. թէեւ ընդարձակ չէ, բայց երկայն դիրք մը ունի. նաեւ այս տեղն է խոհարանն. եւ այս է երկրորդ դստիկոնն. ըստ որում այս բակին տակն է առաջին դստիկոնն, որն որ ընդարձակ մթերանոց (մաղազայ) մի է, ուր տեղ փայտ կլեցնեն. այս ետքինին մե-

Ֆութիւնն, շէնքին դուրսի կողմէն աւելի աղէկ կերեալ քան թէ բակէն: Սոյն բակին հիւսիսային կողմը երրորդ դստիկոնն հանող քարաշէն սանդուխին քովը դուռ մը կայ. ուսկից երկու մասանաց մէջ տեղի նիղ ճանապարհէն քիչ մը առաջ երթալով ու դառնալով, եկեղեցւոյն թէ հարաւային արեւմտեան կողմի դուռը, եւ թէ անկէց ալ քիչ մը անդին դէպ ի աջ կողմը դառնալով, նորա արեւմտեան կողմի մեծ դուռն կերթացուի: Ասկէց ալ քիչ մը անդին, եկեղեցւոյ հիւսիսային կողմը գետնին տակը ձիւնհօր մը կայ. որուն ճիւղը կըսեն: Այս տեղը 16 ոտք փայտաշէն սանդուխ մը կայ. ուսկից վերի յարկը կելլան. ուր որ երկու խուցերու առջեւ երկայնաձեւ փոքրիկ սրահ մը կայ. այս կողմի սոյն շէնքն միւսներէն տարբեր առանձին դիւրք մը ունի:

Վերոյիշեալ բակին մէջի քարաշէն նեղ սանդուխն երրորդ դստիկոնն կհանէ. ուր որ երկայն եւ ըստ բաւականին ընդարձակ սրահ մը կայ. որուն երկու կողմերն մէյ մէկ կարգի վերայ միմեանց կից ինը սենեակ շինուած են, որոց չորսը հարաւային եւ հինգը հիւսիսային կողմն է. այս ետքի կարգին մէջն է Առաջնորդարանն եւ Դպրոցն. ուր որ Բարսեղ եւ Վարդան վարդապետներն զայն շինելու նորոգելու իւրեանց ուսումնասէր աշակերտաց դասատուութիւն ըրել են. բայց թաղին տուններն հետզհետէ շատցած լինելուն համար, հետեւաբար թաղական դպրոց մը եղած է. որուն մէջ այժմ 40 ի չափ աշակերտներ կան: Հարկ չէ ըսել որ Արժանընտիր Առանորդ, Գերապատիւ Երեմիա Վարդապետն, թէ ազգին վերայ յատկապէս ունեցած անկեղծ եւ ճշմարիտ սիրոյն ու գթութեանը՝ եւ թէ տեղւոյն ուսումնաստեհ սնդայ:



նոց փափաքն լեցնելու աղաղաւ, ոչ թէ միայն աոյն  
դպրոցին, այլեւ միանգամայն քաղաքին մէջի միւս չորս  
դպրոցաց ուսումնական յառաջադիմութեանը համար,  
նոյն տեղի անայժմ գտնուած թէ հայկաբանութեան,  
թէ թուաբանութեան եւ թէ հասարակ ընթերցմանց  
դաստոռաց, որ եւ իցէ քաջալերացուցիչ եւ գոհացուցիչ  
միջոցներն ի գործ դնելու մասին երբեք աշխատութիւն  
չինայելէն զատ, իւր անաջնորդական գործոց զբաղ-  
մունքներն ալ բաւական չհամարելով, օրուան որոշեալ  
ժամանակին մէջ ուղղորդելուն, շարունակ թէ հայկաբա-  
նութիւն եւ թէ ճարտասանութիւն ամենայն սիրով դաս  
տալու չղլմնալուն համար, ամբողջ ազգայինքն միահա-  
մուռ կկկայեն. որն որ իւր թէ այս յատկութեանց եւ թէ  
անաջնորդական պաշտօնին յատուկ եղած պարտաւորու-  
թեանց մէջ թերութիւն մը չունենալէն զատ, մանաւանդ  
թէ ինչպէս որ պետք է ազգասիրական ջանիւք բազմա-  
թիւ արդիւնքներ ալ ունենալուն եւ ազգը հայրական  
խնամօք հովուելուն արտաճառաւ, Բաղէշի եւ նորա սահ-  
մանակից գաւառաց բոլոր ազգայնոց համակրութիւնն  
սերն եւ համարմունքն ստացած է. որն որ իւր այս ամէն  
արդասիքներովն ինքզինքը ընդհանուր ազգին խորին  
շնորհակալութեան եւ երախտագիտութեան եւ համար-  
մանը արժանի ըրած է: Որուն համար մենք ալ կբարե-  
մաղթեմք կարողութիւն, յաջողութիւն եւ յարատեւու-  
թիւն: Երբ որ ցգնորդեց ընդհանուր գնդը Գնդը  
Սոյն արահին արեւմտեան ծայրը շինուած քանի մը  
նոք քարաշէն սանդուխէն չորրորդ դստիկոնը կելլան.  
ուր տեղ բոլոր շինուածոց տանիքն է. որուն վերայ չորս  
սենեակներ կան, որոց մէկն արեւմտեան հարաւային կող-

մըն է . որ շատ զուարճալի դիրք մը ունի եւ քառակուսի է . երրորդն եւ չորրորդն ալ հիւսիսային արեւմտեան կողմն է : Սոյն առաջին , երրորդ եւ չորրորդ սենեակներն , ասկէց տասը տարիի չափ առաջ տեղւոյն վախճանեալ Առաջնորդ Ռկրտիչ Եպիսկոպոսը շինած է :

Եկեղեցւոյն արեւելեան կողմը խորանին ետեւը պարտէզ մը , եւ անոր կից արեւելեանն հիւսիսային կողմն ալ ծառատունկ մը կայ : Վանքին հարաւային կողմը լեռան զառի վայրին վերայ կարգ կարգ բազմաթիւ ծառերով զարդարուած բաւական մեծ եւ ընդարձակ զուարճալի պարտէզ մը կայ , որն որ մինչեւ գետակին եզերքը տարածուած է : Այս տեղն քանի մը աղբիւրներ ալ կան : Նաեւ վանքին ջաղայքն ալ այս տեղն է : Վանքին արեւմտեան կողմի դռնէն դուրս , նորա ձախ կողմը շինուած քառակուսի շէնքը ոչխարաց դմն է : Սոյն արեւմտեան դրան առջեւն է վանքին գերեզմանատունն . որ որ բազմաթիւ մարմարիոն քարէ արձաններ կան : Սոյն գերեզմանատունէն սկսեալ երեւցած բոլոր ընդարձակ գետինն , այսինքն մինչեւ գետակին արեւմտեան եւ հարաւային երկու կողմի եզերքներն , եւ արեւմտեան կողմի լեռներն , նաեւ վանքին հարաւային կողմի քարաշէն կամուրջէն սկսեալ , այն կողմի գետակին եզերքէն մինչեւ հարաւային կողմի լեռներն երեւցած բոլոր գետիններն , ուր որ գետնէն քանի մը տեղ դառնահասմ բժշկական ջուրեր կըլսեն , որոնց բոլորովքը դեղնագոյն են : Նաեւ հարաւային կողմի լեռներն . եւ վանքին առջեւն անցած առուն . ասոնց բոլորն ալ սկիզբէն ի վեր մինչեւ ցայժմ վանքին օսփհականութիւններն եւ սահմաններն են :

Սոյն վանքին արեւմտեան կողմի դրան վրայի արձա-





Գին տղիտու թենէն յառաջ եկած թշուառութեանը կա-  
 ընկից եղող, գթացող եւ բարերարող շատ մը հոգեւից  
 վարդապետաց ցանկին մէջ, զատ գլուխով մը կ'իշխե-  
 սոյն Ամրոտու վանքին բաղմարդիւն Բարսեղ ու-  
 սումնասէր վարդապետն. որն որ ոչ թէ միայն ինքն ուս-  
 ման հետեւելով բաւականացեր է, այլ մանաւանդ որ  
 ամէնէն աւելի գովելի եւ օգտակարն է, դպրոց բանալով  
 իրեն նման շատ մը ուսումնական աշակերտներ հասու-  
 ցեր է, եւ իւր ընտիր նը ճգնաղգեաց վարուքն ալ,  
 նոցա առաքինութեան հայելի եւ օրինակ հանդիսացեր  
 է. ինչպէս որ յիշեալ պատմիչն՝ նորա թէ վանքն ի հի-  
 մանէ նորոգելուն եւ թէ այս արդեանց եւ յատկութեց  
 վերայ, ԳԼ. ԻԹ. ին մէջ կըսէ. «Արդ ի հնոց եւ ի վա-  
 ղեմեաց ժամանակաց կայր դասատուն վարդապետաց ի  
 քաղաքն Բաղէշ, ի վանքն որոյ անունն Ամրոտ առնն,  
 որ յաջորդելով մի գմի էհաս մինչեւ ի ժամանակ հարց  
 մերոց: Զորում ժամանակի էր յաջորդ եւ առաջնորդ պետ  
 եւ գլուխ վարդապետաց տեղոյն այնմիկ ոմն վարդա-  
 պետ Բարսեղ անուն, որ էր այր երեւելի եւ մեծանուն,  
 եւ յորով աշակերտաց տէր: Եւ նոյն վանքն Ամրոտու  
 յառաջագոյն խրդին եւ յոռի շինեալ էր եւ այն եւս  
 խարխալեալ էր ի հնութենէ, սա զամենեսեան շինուած-  
 սըն միահաղոյն քակեաց, եւ եւ ինքն վերստին հիմ-  
 նարկեալ շինեաց եւ կատարեաց զբովանդակն, զեկեղեցին  
 եւ զպուսնն եւ զայսն որ ի նոսա: . . . Եւ որպէս տէրն  
 Քրիստոս յառկա երեք նկանակին ասաց, թէ ոչ տացէ  
 վասն բարեկամութեան, սակայն վասն ժողովեան յա-  
 րուցեալ տացէ նմա զինչ եւ խնդրեսցէ: Այսպէս եւ ամա-  
 հո, որ անդադար եւ անձանձիր տքնութեամբ յարհա-





րէն , եւ թէ տեղւոյն ազգայնոց աւանդութիւններէն  
յայտնի է , որ Արծւոյն թիւ 3 . երես 67 ին մէջ յիշ-  
եալ վարդան վարդապետն , 1695 ին ժամանակներն  
եկած է . եւ Բարսեղ վարդապետին աշակերտաց աշա-  
կերտներէն է , որն որ իւր նախորդին հետեւելով , վան-  
քին դպրոցին մէջ դասատուութիւն կրնէ եղեր . (1) եւ  
Չամչեան Հ . Միքայէլն ալ կպատմէ թէ , սոյն վար-  
դան վարդապետին քով կրթեալ եւ ռաբալ աշակերտներն  
են այն երկու առաքինազարդ բարեյիշատակ սքանչելի  
անձինքն . որոց մէկն է Գրիգոր Շլթայակիր Պատրիարքն  
Երուսաղէմայ . եւ միւսն է Կոլոտ Յովհաննէս Պատրի-  
արքն Ս . Պօլսոյ . որոց համար կըսէ թէ , « Երկոք ին սոքա  
Գրիգոր եւ Յովհաննէս էին աշակերտեալք վարդանայ  
վարդապետի՝ Առաջնորդի վանացն Ամրոտօլու՝ որ ՚ի  
Բաղէշ . յորմէ երկօքին եւսկոչեցան Բաղիշեցի : » հատոր  
Գ . երես 770 :

Այն երկու երեւելի Պատրիարքներն , իւրեանց ադ-  
դասիրութեամբն , սուրբ եւ ընտիր վարքովն եւ անխա-  
ռառակ ոգւովն , ինչպէս ազգին սիրելի եղերեն , եւ նո-  
րա յետին աստիճան տխուր եւ խեղճ ժամանակներն

(1) Ըստէլ պատմագրին հետեւեալ խօսքերէն խնայ Հասանական կերե-  
ւայ որ , թէ Բարսեղ վարդապետն եւ թէ իւր յաջորդն , ոչ թէ Տիպի  
եկեղեցական լինելու յիրք եւ յօթարութեան ունեցող աղակերպաց , այլե-  
ռադային մէջ ստանալ փախսող որ եւ իջէ հասակէ եւ վիճակէ եղալն .  
բուն ամենաւն ալ Հասապարապէս մի եւ նոյն ստանալներն դաս խո-  
րան եղեր . ըստ որում Բարսեղին համար կըսէ թէ , ( Տե՛ճաւ պարտանօ  
ըղչայր Բերեւ հասանի այնմ գիտութեան « քերականութեան » ոչ Տիպի  
վարն իւր , այլ Տանաւանդ վասն ազգին , ղի արժարժեալ սխալեցի ՚ի մեջ  
ազգի » հայոց . Գլ . Իվ . :



# Գ Ի Շ Ե Ր Ե Յ Ի Ն Տ Ե Ս Ե Ր Ը Ն

Առաջին պատեց, է գիշեր,  
Աստղեր միայն են յեթեր.

Յոգնած մշակն ի դաշտի,  
Ահա ահաին կպառկի.

Բմեն տեղ ալ մթութիւն,  
Պատեր է խոր լռութիւն.

Ձայն մը միայն կհնչէ,  
Ամ հովիւ վող կփչէ,  
Ամ քերթողին մրմունջն է.

Ագահն ի թուփս կսքողի,  
Սիրել պաշտել զիւրն ոսկի.  
Արբշիւն է ընդեր տակառի,

Խիշտ կերազէ բարկ օղի.  
Չորերուն մէջ կպահուի դող.  
Գիշերաչուից տալով դող.



Մէջ ծառերուն պառաւներ

Դէմ աղօթքան են կայներ ,

Սուրճ կը ծեծեն աղօթկեր .

Մէկն նժդեհէն ողջանդամ դարձ կը խնդրէ ,

Մէկն իւր որդւոյն կեանք եւ արեւ կը մաղթէ :

Բայց պանդուխտը պանդուխիմը մէջ ,

Որոյ պատերն են թաց ու գէշ ,

Իւր խեղճ կենաց կսպառնան վերջ .

Քրտամբ զանգեալ հաց կճաշէ ,

Արտաւնքով ալ չորն կթրջէ .

Մէյ մը հայրենիքն , իւր սիրելիքն կյիշէ ,

Մէյ մ'ալ լալով աղեկտուր կհառաչէ :

Փախչի խաւարն ելեալ արփին ,

Մշակն յորդան տայ եզին .

Ագահն ծածկէ իւր ոսկին ,

Պանդուխտն ելաւ իւր գործին ,

Արբշտն բարեւ տայ տակաւին .

Գողն եւ դողոնք կթաքչին :

Լըն . թ . Լըն . թ .

Ս . Ս . ալալալ :



## ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ (1)

## ՄԱՐԻԱՄ ԱՌԵՂԱՅՐ ԻՒՐ

Ահ, սիրելի եղբայր, այս առաջին նամակը որ ձեզ կուղղեմ, տխրութեամբ լի է որն որ ձեր սիրտը պիտի կոտրէ։ Ես արտասուաց մեջ խեղդուած եմ։ Ձի զմեզ Աստուած կփորձէ եւ անիկայ իւր քովը կկանչէ, որուն վերայ մեք մեր կեանքը կդնէինք։ Սիրելի եղբայր, այժմ մեք որբ եմք։ Եռանդ երեկոյեան ատեն, մեր բարի մայրը մեռաւ եւ այսօր աստուանց թաղուեցաւ։ Ինչպէս պատմեմ քեզի այն ամէնը, որ ես ցաւօք սրտի զգացի։ Ինչպէս մեկնեմ քեզ ինչ որ կրեցի, երբ մեր սիրելի մօրը ճշրադին տակաւ առ տակաւ մարիլը կտեսնայի։ Դաւ գիտես թէ որչափ կսիրէի եւ որչափ ինքը արժանի էր մեր սիրոյն։ Եղբայր, բոլոր ուժս հաւաքելով քեզի կրկնել կջանամ նորա վերջին խօսքերն, որոնք մեզի համար նուիրական պիտի լինին միշտ։

Իւր մահուան ժամանակը նստած էի անկողնոյն քով, երբ ձեր նամակը ընդունեցինք։ Կարգացի անոր, որ ուրախութենէն լալ սկսեց։

«Աւագ. սիրելի աղջիկս, ինծի ասաց, այս հիւանդութենէն չեմ ազատիր եւ մեր շօրը քովը կերթամ, որ երկինքն է։ Ես որ կմեռնիմ, իմ քաղցր մխիթարութիւնս այս է որ զձեզ որչափ որ կարողացայ դաստիարակելով մեծցուցի։ Ով իմ սիրելի որդիք, միշտ առաքինի ու երկրւոյն եղէք եւ ձեր սիրտը գէպ ի Աստուած ուղղելով

խնդրեցէք որ ձեզի օգնէ աշխարհիս արկածնե րուն մէջ եւ ձեզ բարի օրեր տայ : Ամէն բանէն վեր սիրեցէք զինքը , իւր պատուիրաններն պահեցէք , ի նա յուսացէք , հաւատացէք ԅն Բն Փրկիչ Աստուած մեր : սիրով կատարեցէք այն ամէնն որ ձեզի հրամայած է եւ ջանացէք որ նորա Աստուածային օրինակին հետեւիք : խնդրեցէք Աստուծմէ որ իւր քր շողովն ձեզի լուսաւորէ ու առաջնորդէ : Սիրեցէք զմիմեանս եւ ամէն մարդու հետ բարի արտով վարուեցէք : Աղքատութենէ կամ ի հարկէ ստիպեալ , չլինի թէ ուրիշին ունեցածէն բան մը վերցունէք : սոսկացէք ամէն մեղքերէն . ամենայն խնամօք պաշտպանեցէք այն միակ գանձը , որ ձեր անմեղութիւն է : Աստախանմութիւնն զձեզ չպիտի թողու . այսուհետեւ նա է ձեր մայրը՝ ինչպէս որ մինչեւ հիմայ ձեր հայրն էր . առանց վախնալու զձեզ նորա մայրենի բազկաց մէջ ձգեցէք : Մնաք բարեաւ , որդեակք իմ , ամենեւին չլինի որ լայք վասն զի ես առ Աստուած կերթամ , ուր որ ձեզի համար պիտի աղօթեմ : Ահա ասոնք մահուան անկողնոյն մէջ խօսած ձեր մօրը վերջին խրատներն , մի մոռնաք բնաւ . սիրելի Մարիամ , ասոնք Յակոբ որդւոյս ալ հաղորդէ : Ասա իրեն որ իմ մխիթարութիւնս , իւր մինչեւ ցայժմ ունեցած բարի վարքն եղած է : քանի որ Աստուած զիս իւր փառաց ծոցը կկանչէ . յուսով եմ որ անկէ պիտի տեսնամ , անոր շարունակ այն սկզբմանց համեմատ ապրիլն , ինչպէս որ մինչեւ հիմա հրահանգուած է կրօնի ու առաքինութեան մէջ : Իմ վերջին բարեւս տուր . շատ կփափաքէի զինքը անդամ մի եւս տեսնալու , բայց հոգ չէ քանի որ երկինք մէկգմէկ կտեսնամք , ուր թերեւս ձեր հայրն ալ տեսնամ : Եւ դու սիրելի աղջիկս , Աստուած



պահէ քեզի . եւ այն ամէն բաներուն փոխարէն վարձատրէ , որ դուն քու մօրդ ըրիր եւ որպէս զի զքեզ անմեղ եւ անբիծ պահէ . . . » . Ոյժը պակսելով սկսաւ նեղիլ . անասունը զիս գրկելով երկու քիւ համար տկար ձայնով մը օրհնութիւն կարդաց , ասելով , « Տէր , օրհնէ Յակոբը , օրհնէ Մարիամը : »

Երեք ժամէն զկնի , եկեղեցական հօ խորհրդոյն հաղորդուելով , խաղաղութիւն յոյն Աստուծոյ վերայ դրած իւր հոգին աւանդեց , եւ ես միայն եմ մնացեր զինք ողբալու համար : Մեր արգոյ հովիւը մինչեւ վերջին բնակարանը ընկերացաւ անոր հետ , այն ամէն բարիքը որ ըրաւ նորա վերջին հիւանդուէր ատեն , չեմ կրնար պատմել : Ամէն օր այցելութեան կուգար , ամէն օր զայն մխիթարելու համար բաներ կուղարկէր : Ինքն էր որ բժիշկ բերել տուաւ եւ դեղավաճառին ծախքն ալ վճարեց . այն վերջին վայրկենին նա ներկայ դռնուելով կխրատուէր եւ կմխիթարէր իւր քաղցր խօսքերովը : Եղբայր , աղօթք ըրէ Հ . Կիւրեղին համար որ Աստուած նորա դործոց փոխարէն վարձատրէ , ինծի համար եւս աղօթէ որ այժմ ողորմելի աղջիկ մի եմ : Յիւրաւի , երկու քնիւ ալ եղկելի , երկու անասաւէն որբեր ենք , բայց դու մեծ եւ ուժով ես որով կկարողանաս աշխատութիւն քու հացը վաստկիլ . իսկ ես ի՞նչ կրնամ ընել : Ծառայելու համար շատ տկար եմ եւ դժնդակ է մուրանալն : Ո՞վ սիրելի բարեկամ , Աստուած ողորմէ քու խեղճ քրոջդ :

ՄԱՐԻԱՄ

Կարո՞ւնա՞նք :



Ա Ռ Ա Վ

Ո Ր Ս Ո Ր Դ Ե Ի Ա Ղ Ո Ւ Է Ս

Որսորդն օր մը լեռը գնաց ,  
Աղուէս մը ողջ բռնեց յանկարծ ,  
Չուանը վիզը դրաւ .

Վաճառանոցն առաւ տարաւ :  
Մուշտակակարն զանի գնեց ,  
Մէկին տուաւ ու տուն խրկեց ,

Որ զինք մորթէ

Եւ տիկ հանէ :

Տղայք մէկ տեղ ժողովեցան ,

Աղուէսին շուրջ պար կխաղան .

Տեսաւ նա յանկարծ

Դռան մէկ բաց ,

Նոցա խումբէն շուտ դուրս թուաւ ,

Աճապարեց ու ներս մտաւ .

Տեսաւ այն տեղ շատ աղուէսներ ,

Որ ցիցերէն էին կախուեր ,

Ես ալ ասոնց կրնամ նմանել .

Այս ըսաւ ,

Ցիցէն կախուեցաւ :

Զինք փնտռողներըն ներս մտան ,

Հատ նայեցան բան չգտան .

Մինն միւսին կըսէր այսպէս ,

Ո՛ր է աղուէս , ո՛ր է աղուէս .


Մի թէ այս տեղ չէ՛ր որ մտաւ ,

Այ անթծեալ ուր արդ փախաւ :  
Ճակ ծուկ չմնաց որ չնայեցան ,  
Ու զարմացած անշարժ կեցան :  
Իսկ անդին աղուէսն ,  
Ինքզինքը կծկեց ,  
Ահանջն սրեց  
Պոչը տնկեց ,

Արամազդայ ալ մատաղ մը կանչեց .  
Վախուած տեղէն վար նետուեցաւ ,  
Վար իջնալ անյայտ բլլարն մէկ եղաւ :  
Ամէն մէկ տեղ ետեւն ընկան ,  
Բայց շնիկի մ' գործ չտեսան :

Քեզի կըսեմ ո՛վ բանական ,  
Քո որսորդն է չար սատանան .  
Զգոյշ կեցիր ամէն վարկեան ,  
Որ նորա շղթայք ոտքերդ չմտնան .  
Եթէ մտնան ,  
Աղուէսին նման ,  
Եղիր դու ճարպիկ  
Վարէ այն սարիք :

Խորոյ . Ս . Յովհաննէս . Աշտիշ .  
Ժ . Ս . Ս արագայ :



ՍԵՐ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

Արեգակը երկնային կամարէն խողարհիլ սկսած է , արեւ  
Էբլեան ամպեր սեւախառն կապոյտ ներկուած են , երկնից

երեսը մերամաղձոտ թեթեւ մթութիւն մը կտիրէ եւ մը-  
րըրկի նշաններ կտեսնուին :

Բնդարձակ դաշտի մը հարաւային կողմը խրոխտապանծ  
լեռ մը կտեսնուի , որուն գագաթը բազմաթիւ գալերէ  
ի վեր ձիւներ դիզուած են :

Այս այն լեռն է , որ մէկը զայն տեսած ատեն , անհնար  
է որ իւր հրեականութիւնը սանձակոծէ , նախնի դա-  
րոց յիշատակութիւններն չհետազօտէ . ու նորա վերայ  
եղած սքանչելի պատմութիւններն չքննէ ու չար-  
տասուէ . . . . :

Բայց զարմանալին այս է , որ նորա անեղանելի արտե-  
ւանին , շեղջակութեալ սառույցներուն վերայ մարդմը կայ-  
նած է . հասակը կարճ , աչքերն կրակոտ , դէմքը դաժան ,  
մօրուքը ալեխառն . խուրձ մը կապարճ կռակը ձգած ,  
աղեղ ձեռքը բռնած է , նման այն որոտընդոտ ամպե-  
րուն որք կայծակելու պատրաստ են :

Այն անհեթեթ լեռան քով լեռնակ մ'ալ կայ , նորա  
կիսոյն չափ բարձր ու գլուխը ձիւներէն ազատ . ասոր  
գլուխն ալ մէկը նստած է , որ իւր բարձր հասակաւ ,  
գեղեցիկ կերպարանքովը , քաղցր բնութեամբը միւսին  
չառ հակառակ կտեսնուի . գէնքերն գետինը փռած  
գլուխը կուրծքին վերայ խոնարհեցուցած է , որ իւր  
մտածմանց մէջ ընկզման լինելն կնշանակէ :

Ո՛վ են այս զարմանալի անձինքն որ ասանկ սոսկալի  
մըրկի մը ատեն լեռանց ծայրերն կգտնուին . ոչ ոք ,  
բայց եթէ Սիրոյ եւ ատելութեան աստուածներ . որք  
պատերազմելու եղած են :

Հատ չանցաւ , մեծ լեռան ծայրը կայնող անձո լարեց  
աղեղն ու ետեւէ ետեւ զարկաւ լեռան չուրջը գտնուող



բնակիչներուն . մէյ մ'ալ նայիս մատնութիւն . . . սպաննութիւն . . . անհամաձայնութիւն . . . գերութիւն . . . աւերմունք . . . աղքատութիւն . . . եւ ամէն տեսակ վատութիւններ տեղի ունեցան նոցա մէջ :

Փոքր լեռան գլուխը նստող երկտասարդին սիրտը սոյն տեսարանին վերայ գործված , իւր արտասուքն չկարողացաւ բռնել . մեղդոյշ աչքերը մէյ մը երկինք մէյ մ'ալ յերկիր շրջելով . նա ալ այն բաբելոնական խառնակութեան մէջ իւր նետերն արձակեց . սակայն քիչ մարդ տեսնուեցաւ անդ , որ զընկերն գրկած կհամբուրէր :

Երեք ժամէն զինի հիւսիսային հովն ամպերն գէպ ի հարաւ մղելով՝ լեռներն ալ , մարդիկն ալ ի միասին ծածկեց . երկու սարերուն մէջ որոտման ձայներ կլսուին , շանթեր կշողշողան . վասն զի Սէրն ու ատելութիւնը պատերազմիլ սկսան :

Անօրէն , գոռաց Սէրը փոքր լեռան գլխէն , հինգ հարիւր տարի կլինի որ դու այդ պատկառելի լեռան գահը ինձմէ յափշտակելով , քոյ անօրէնութեան աթոռ հաստատած ես . եւ այդ ժողովուրդը քոյ ժանտ սլաքներէն վիրաւորեցաւ . . . տկարացաւ . . . եւ վերջին աստիճան խղճութեան հասաւ . . . բաւական չէ որ զանոնք իրարու դէմ գրգռես եւ իրար կործանել ուսուցանես . այդ չափ լացն , այդ չափ հառաչանքն քու սիրտդ չեն շարժեր :

Ամենեւի՛ն , որոտաց ատելութիւնը , ինծի հոգ չեն աւտոնք , իմ աղբիւրս լեզի լինելով ոչ երբէք մեղր կբղխէ . քանի որ անոնք ինծի կհպատակին իմ շանթերս նոցա մէջէն պակաս չափով լինի . քեզի կասեմ , բաւական է որ ինծի հետ միշտ կուուելու համարձակիս եւ իմ անդորրութիւնս խոռովես :

Իրաւունք ունիս ասաց Սէրն . զի այդ ժողովուրդը Թէ-  
եւ ժամանակ մը իւր բարեկամն ու Թշնամին չճանչցաւ ,  
իսկ այժմ խելքը գլուխ ժողոված լուսաւորուելու վերայ  
է . եւ դու այսուհետեւ անոնց վերայ յաւիտեան տի-  
րելու յոյս մ'ունենար , զի շատերն արագ արագ իմ գրու-  
թիւն տակը գալու վերայ են :

Այս տեղն էր որ Սիրոյ աստուածոյն աչքերն յուսոյ  
եւ ուրախութեան արտասուքներ Թափեցին . եւ իւր կա-  
րասիքն ժողովելով ասպարեզէն հեռացաւ , անձկանօք  
սպասելով այն աւուր , Թէ երբ բոլոր հայ սիրտերն  
զինքը պիտի ընդունին :

Աւելն Թ . Աւելիր . Ժ .

Ա . Ա շարժայ :

### ԳԻՒՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏՔ

Աշխարհիս սկիզբէն մինչեւ մեր օրերն եկած զացած  
այն ամէն անձինքն , ամենայն երախտագիտութեան եւ  
շնորհակալութեան արժանի են , որոնք իւրեանց աշխա-  
տութեամբն եւ մտաց ճարտարութեամբն , մարդուս գիւ-  
րակեցութեան համար տեսակ տեսակ գիւտեր եւ ար-  
ուեստներ հնարելը են . որոց արդիւնքներն միշտ վայե-  
լելու վերայ եմք . սոյն գիւտերէն շատերուն տաժանելի  
աշխատութեամբ բաղմաթիւ փորձերով կատարելագործ-  
ուելուն վերայ որչափ որ խոկամք , այնչափ ալ նոցա ար-

դեանց յարգն եւ արժէքն աւելի կճանչնամք : Եթէ  
Նախախնամութիւնն մարդուս այսպիսի զարմանալի հան-  
ճար մը պնդեալած չլինէր, մինչեւ ցայժմ լուսինն եւ  
աստղերն մոմի, ոչխարին մորթն զգեստի տեղ մեղի ծա-  
ռալիով, լիւրանց այրերն եւ խոռոչներն ալ մեր բնակա-  
րաններն եղած պիտի լինէին : Արդարեւ սոյն ճարտա-  
րութեանց եւ հանճարներուն արդիւնքն է որ մարդիկ  
այսօրուան օրս դիւրակեցութեան խիստ կարեւոր եղած  
պիտոյից մասին գրեթէ երբէք կարօտութիւն մը չունին.  
բայց այս դիւրակեցութեան վայելչութիւնն երկրագուն-  
տիս վերայի ամէն տեղի բնակչաց ամենուն ալ միօրինակ  
չէ : զորօրինակ հիւսիսային բեւեռին մօտ ձուկով եւ  
ծառի կեդեւով ցրտութեան մէջ ապրողներուն կենաց  
հանգստութիւնն, բարեխառն գօտեղին տակ եղողներուն  
նմանութիւն չունի. բայց եթէ նոցա հարցնելու լինիմք, մենք  
չառ գոհ եւ երջանիկ եմք կըսեն. վասն զի անգամ մը  
այնպէս սորվեր են. սակայն ի նոցանէ որ եւ իցէ մէկը  
եթէ քիչ մը ժամանակ մեր երկիրներուն մէջի եղած  
հանգստութեանը եւ դիւրութեանը վարժուի, այն ատեն  
նորա մտքին մէջ բնականաբար բաղդատութիւն մը ծը-  
նանելով, կակսի իւր նախնի վիճակին թշուառութիւնը  
զգալ. ըսել է որ երկրին բերքերն եւ նորա հողին, ջու-  
րին, օդին եւ կլիմային ընտիր ընտիր յատկութիւնքն ալ  
պէտք է որ մարդուս հանճարին հետ միանան, որ դիւրա-  
կեցուէ նպատեն : Ասիայի ազգաց ամէնէն առաջ գիտու-  
թեանց եւ արուեստից մէջ յատաջանալուն, եւ հետեւա-  
բար նախնականութեան պատիւն ստանալուն պատ-  
ճառն, մէյ մը այս է. եւ մէյ մ'ալ մարդկային ազգն ամէ-  
նէն առաջ այս պատուական երկիրներուն մէջ ծնանիլն



եւ շատնալն է . որոց օրօրանն է պանծալին Հայաստան . եւ Ասիային սոյն գովելի յատկութեանց հետ հանձարներուն բնական ազնուութիւնն ալ զարմանալի հաւասարակշուութիւն մը ունի . Բայց դժբաղդութեամբ կտեսնամք ուր , որ երկիրներն որ գիտութեամբ եւ արուեստիւք ճարտարութեամբ եւ հարստութեամբ յառաջացեր ու ճոխացեր են , այս պատճառաւ չարամիտ ազգերն նախանձիւք գրգռուելով , սկսած են պատերազմելով նոցա վերայ յարձակիլ ու միմեանց ձեռքէ յափշտակելու ջանալ աւել ու կործանել , եւ խաղաղութիւնն բոլորովին վերցուցեր են . հետեւաբար գիտութիւնքն եւ արուեստներն ալ ի միասին ոմանք անհետ եղեր են , եւ ոմանք ալ որ հետզհետէ կատարելագործուելու վերայ էին , իւրեանց նախնական դրութեանը մէջ մնացեր են , եւ բազմաթիւ սքանչելի հանձարներն ալ տխրութեան մէջ անգործ ամուլ եւ ամայի մնալով մեռեր ու գնացեր են եւ տակաւին կմեռնին : Ահաւասիկ Ասիոյ ամէն ազգերէն աւելի շատ անգամ եւ ամէնէն առաջ այս ամէն արկածից երթակայ եղաւ զանազան բարեմասնութեամբ եւ հարստութեամբ ճոխացեալն մեր Հայաստան :

Ետքի դարերուն ժամանակներն , գիտութիւնքն եւ արուեստներն դէպ ի Եւրոպայ արշաւելով , մութ Բայց խաղաղ անկիւններու մէջ բնակած , սկսեց կատարելագործուիլ , մտքերն սրել եւ աւելի նոր նոր գիւտեր ալ հնարելու գրգիռ եւ առիթ տալ . որոնցմով դարն ալ լուսաւորեալ անունն ստացաւ , Յուսով եմք որ ասկէց ետեւ արեւելեան ազգերն ալ Եւրոպայի հետ ի միասին ամէն տեսակ գիտութեանց եւ արուեստից մէջ յառաջանալով , եւ աւելի նոր նոր գիւտեր ալ պիտի հնարուին եւ այն

ատենը յայտնի է որ, հետեւաբար այս դարն ապագայ  
դարերուն քով շատ խեղճ բան մը եղած պիտի լինի :

Տիգրան . Կ . Սահակ . Լևոնիս .  
Ժ . Ս . Ս . Սարգս :

— 10 —

### ԲՈՆԱԿԱՆ ԱՅԾԻ ՄԸ ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆԸ

Երկու գող միմեանց հետ դաշնակից լինելով, գիշերն  
սաստիկ մութ ատեն ընդ կերթան կտեսնան որ, այծերն  
արածող խղճալի հովիւն գլուխը քարի մը վերայ դը-  
րած կ'ընանայ . ի սոցանէ մեկն ձեռքերն գետինը դը-  
նելով, չորս ոտքով այծ մը կ'լինի կերթայ հովիւին  
քովն . ու այծու ձայնով զօրաւոր կերպով պօռալով կըփախ-  
չի ու կ'հեռանայ . եւ ան ալ յանկարծ կարթննայ առանց  
տարակուսանաց իւր այծերէն մեկն կարծելով, շուտ մը  
ետեւէն կ'վազէ որ ետ դարձնէ . անոնք ըստ բաւականին  
հեռանալէն ետեւ, գողին միւս ընկերն որ այն կողմերն  
պահուրած է, որչափ որ կ'ընայ նէ շուտով այծերուն մեծ  
մասը առջին կձգէ կառնէ կերթայ :

### ՀԱՆԵԼՈՒԿ

Հայրը պողպատ

է, ստեղծուած .

Որ կազմութիւնն է պղնձի

Արժիճէ ալ զաւակ կծնի :

## ԵՆՁՆԵՈՒԷՐ

### ԳՈՐԾԵԿԱՆ ՔՐԵՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՈՒՆՆՈՒՄ ԳՐԱՅԻՆ ՏՆՈՒՄՆԱՆՆԵՐ

ՍՈՒՆՆՈՒՄ ԵՂԵՆԻՆՆԵՐ ՈՒՆՆՈՒՄ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ՈՒՆՆՈՒՄ  
ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԵՂԵՆԻՆՆԵՐ ԵՂԵՆԻՆՆԵՐ

ԵՂԵՆԻՆՆԵՐ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ՈՒՆՆՈՒՄ

ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ

ԵՂԵՆԻՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ

ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ  
ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ  
ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ

ԳՐԱՅԻՆ ՍՆՈՒՄՆԱՆՆԵՐ ԳՐԱՅԻՆ



ԲՈՎԱՆԴԱՍՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՅ :

|                                                                           |     |
|---------------------------------------------------------------------------|-----|
| Յոյս եւ անյուսգութիւն :                                                   | 89  |
| Տաղաչախութիւն Գերապատիւ Թովուղեան Յակոբ Եպիսկոպոսի վանահօր լիմ Անապատայ : | 92  |
| Տեսարանք հայրենի աշխարհաց . Բաղէշ :                                       | 99  |
| Ազգային Բարերար ուսումնասէր Բարսեղ Վարդապետ :                             | 103 |
| Գիշերային տեսարան :                                                       | 108 |
| Նամակ երկրորդ Մարիամ առ Եղբայր իւր :                                      | 110 |
| Առակ Որսորդ եւ աղուէս :                                                   | 113 |
| Սէր եւ ատելութիւն :                                                       | 114 |
| Գիւտք եւ Արուեստք :                                                       | 117 |
| Բանական սցծի մը աւաղակութիւնը :                                           | 120 |
| Հանելուկ :                                                                |     |

ԳԻՆ ՏԱՐԵՎԱՆ ԸՆԳԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԱՆՈՒԿ  
 Ի Վան , 'ի Բաղէշ , 'ի Մոռ , 'ի Սարիս , երկուսն ու 'ի  
 Խան Ղուրուշնոյ արծաթի Մէճիպիէ :  
 Իսկ Ա . Պօլիս եւ Տաճկաստանի ուրիշ քաղաքները երեւ  
 արծաթի Խան Ղուրուշնոյ Մէճիպիէ :  
 Ի Ռուսաստան եւ ի Պարսկաստան չորս արծաթի Մանէի .  
 Ճանապարհին Ժախը Խմբագիրը պիտի լծարէ :